«ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/42»

ք.Արթիկ

« 25 » հուլիս 2024թ.

«ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան», ի դեմս համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արտակ Ռափյան-ի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) **N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով**, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվում նախատեսված ***ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքի կարիքների համար՝ շինարարական աշխատանքների***՝ աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ **Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում «ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/42» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:**

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է **քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին,** ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի **ծավալաթերթ-նախահաշվին–համապատասխան:**

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **1,2, չափաբաժիններ 60/օրացուցային օր/:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված **օրացուցային գրաֆիկով** :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի **(ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:**

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ << օրենսդրությամբ սահմանված դրույթներին պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջե Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետու նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի **1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյա օրացուցային գրաֆիկը),**

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1. կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերու աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնե երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողությունն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կա պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելո դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 **Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 5 օրվա ընթացքում**:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալառուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: **Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:**

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելո դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքու Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետու նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն **70** տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

2) **նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:**

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 **Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:**

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե **Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները,** այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4) **Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ**՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և **դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը:** Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները **նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:**

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո **Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ** սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության **2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ** սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ **Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման** համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

Բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ **Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:**

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **28 969 800 (քսանութ միլիոն ինը հարյուր վաթսունինը հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ որից 4 828 300 (չորս միլիոն ութ հարյուր քսանութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկում նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնում նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է **հանձման-ընդունման արձանագրության հիման վրա**՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով **հանձնման-ընդունման արձանագրությունը** ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է **տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:**

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ

հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելո դեպքում:

6.4 **Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:**

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական **նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների,** այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Կապալառուն չունի շինարարական նյութերի արդյունահանման թույլտվություն	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
2	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
3	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահապանելը	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
4	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով
5	Շինարարական հրապարակից և /կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Տուգանք – պայմանագրային գնի 0.5% չափով

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսե կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը **և այլն**, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքու հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որով մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 **Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:**

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 **Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետու սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:**

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կաւ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է **www.procurement.am** հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի **N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները**, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է **Հայաստանի Հանրապետության իրավունքը:**

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելուց օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՇՄ Արթիկի Համայնքապետարան	«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ
Հասցե՝Ազատության հրապարակ 1	ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Գր. Լուսավորիչ 2-րդ նրբ., տ 9
ՀՎՀՀ 05553661	ՀՎՀՀ 05550663
Բանկ՝ՀՀ ՖՆ Գործառ Վարչություն	Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 900202205010	h/h 1570068301190100
Համայնքի ղեկավար՝ Ա.Ոսկանյան	Տնօրեն՝Ա. Ռափյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ
« 25 » հուլիս 2024թ. կնքված
«ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/42» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ԱՐԹԻԿ ԹԻՎ 3 և ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՑԱՆԿԱՊԱՏԻ ՆՈՐՈԳՄԱՆ, ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ և ՀՈՂԱՆՑՄԱՆ ԿՈՆՏՈՒՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ»

Ծավալաթերթ
Չափաբաժին 1

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի թիվ 3 մանկապարտեզի ցանկապատի նորոգման,ոռոգման ցանցի և հողանցման կոնտուրի անցկացման աշխատանքներ						
N/N	Աշխատանքների և ծախսերի շիֆրը	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Արժեքը հազ.դրամ	
					Միավոր	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
1		**Ոռոգում**				
2		*1.Հողային աշխատանքներ*				
3	1--961	Բնահողի մշակում ձեռքով	$մ^3$	16,00	2,49	39,83
4	1--968	Բնահողի հետլիցք ձեռքով	$մ^3$	16,00	1,04	16,65
5		Ընդամենը				56,48
6		*2.Մոնտաժային աշխատանքներ*				
7	22--117	Պոլիէտիլենե խողովակների տեղադրում d=20*1,9մմ փորձարկումով	գծ.մ	180,00	0,67	120,74
8	22--117	Պոլիէտիլենե խողովակների խողովակների տեղադրում d=25*2,3մմ փորձարկումով	գծ.մ	82,00	0,89	73,21
9		Պոլիէտիլենե խողովակների ձևավոր մասեր d=20մմ	հատ	30,00	0,04	1,17
10		Պոլիէտիլենե խողովակների ձևավոր մասերd=25մմ	հատ	10,00	0,04	0,39
11		Անցում մետաղ պլաստ d=20մմ	հատ	25,00	1,34	33,47
12		Մետաղական խցապակիչ d=15մմ	հատ	25,00	3,37	84,18
13		Մետաղական խողովակապտուկ d=15մմ	հատ	25,00	0,33	8,37
14	16--134	Կցորդչային փական d=15մմ	հատ	4,00	5,00	19,99
15	16--135	Կցորդչային փական d=20մմ	հատ	3,00	5,55	16,66
16	23--2	Խճե հիմք դիտահորերի և տաշտակների տակ	$մ^3$	0,10	6,92	0,69
17	6--1	Բետոնե հիմք պլաստմասե դիտահորերի կատ B-7,5	$մ^4$	0,02	30,51	0,61
18	22-397	Միացում գործող ջրագծին d=20մմ	1տեղ	1,00	2,63	2,63
19	22--124	Կոյուղու ծալքավոր խողովակներից դիտահորեր D-300 h-300մմ 7հատ	գծ.մ	2,10	9,49	19,92
20		Դիտահորերի և տաշտակների մետաղական կափարիչներ D-300մմ h-1մմ	հատ	7,00	0,33	2,34
21	22--66	Մետաղական պարկուչ D-100մմ	գծ.մ	8,50	6,43	54,63
22		Պարկուճների եզրերի փակում պլաստիկ նյութով D-100մմ	հատ	1,00	0,67	0,67
23	22--202	Պարկուճների ուժեղացված հակակորոզիոն մեկուսացում D-100մմ	գծ.մ	8,50	1,53	12,97

27	46--51	Գոյություն ունեցող դիտահորերի մեջ անցքերի բացում D-150մմ	հատ	1,00	0,40	0,40
28		Գոյություն ունեցող դիտահորերի մեջ անցքերի փակում պլաստիկ նյութով D-150մմ	հատ	1,00	0,67	0,67
29	11--155-1	Ջրաչափ d=15մմ	հատ	1,00	11,07	11,07
		Ընդամենը				**464,79**
31		**Հողանցում**				
32		**Հողային աշխատանքներ**				
33	1--961	Խրամուղու փորում III կարգի բնահողում ձեռքով	մ^3	11,2	2,49	27,88
34	1--968	Բնահողի հետլիցք ձեռքով տոփանումով	մ^3	11,2	1,04	11,65
35		**Ընդամենը**				**39,53**
36		**Մոնտաժային աշխատանքներ**				
37	8-472-2	40*4մմշերտապողպատից հորիզոնական հողանցիչ	գծ.մ	34,0	0,74	25,13
38	8-471-1	50*50*5մմ անկյունային պողպատից ուղղաձիգ հողանցիչ 2մ	10 հատ	1,0	25,33	25,33
39		Հեղյուս մանեկ	հատ	60,0	0	13,39
40		**Ընդամենը**				**63,85**
		Մետաղական ցանկապատ				
41		**Մոնտաժային աշխատանքներ**				
42	7--312 գ-,6	Մետաղական ցանկապատի ապամոնտաժում	գծ.մ	190	3,38	643,09
43	7--312	Խամքարբետոնե ժապավենաձև հիմքերի տակ B-12,5 դասի բետոնով	մ^3	87,60	36,20	3170,69
44	6--14	Ցանկապատի մոնտաժում հողի փորումով և հիմքերի բետոնացում խամքար բետոնով	գծ.մ	190,00	5,64	1071,83
49		Մետաղական կանգնակ100*100*4մմ	գ.մ	262,00	4,94	1293,87
50		Մետաղական պրոֆիլներ 20*20*2մմ	գ.մ	760,00	0,38	289,16
51		Ներդիր էլեմենտ 300*30020մմ	տ	0,19	537,8032	99,49
		Ցանկապատի երեսապատում գործարանային ներկածածկույթով ալիքավոր թիթեղով 0,5մմ հաստ	մ^2	285,00	5,3532	1525,65
52		Գործարանային ծածկույթով ալիքավոր թիթեղի արժեքը	մ^2	285,00	3,95	1126,35
		Ինքնապարուրվող պտուտակ	հատ	524,00	0,06	29,23
58	7--323	Դարպաս-դռնակի տեղադրում հողի փորումով և բետոնացումով// 8 քառ.մ գործարանային ներկածածկույթով ալիքավոր թիթեղով 0,5մմ հաստ	հատ	1	37,49	37,49
		Դարպաս-դռնակի արժեքը երեսապատված 8 քառ.մ գործարանային ներկածածկույթով ալիքավոր թիթեղով 0,5մմ հաստ	հատ	1	128,32	128,32
66	33--82	Մետաղական ցանկապատի կարկասի, յուղաներկում 2 անգամ հակակորոզիոն ներկով	տ	3,094	16,92	52,35
67		**Ընդամենը**				**9467,54**
68		***Պարիսպ տուֆ քարից***				
69		***Պատեր***				
70	8-163	Պատերի իրականացում կանոնավոր ձևի տուֆ քարով	մ^3	48,0	25,52	1224,74
71	8--59	Շարքի ամրանավորում 3վռ-1 ցանցով	տ	0,12	545,78	65,49
72	15-256	Պատերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ^2	40,0	1,93	77,00
73	ռ14-345	Արտաքին պատերի ներկում 2 անգամից ճակատային ներկով	մ^2	40,00	0,56	22,34
74		**Ընդամենը**				**1389,58**
382		**Ընդհանուրը**				**11481,77**
	Չնախատեսված ծախսեր 1,5%					**172,23**
	Ընդամենը					**11654,00**
	ԱԱՀ 20%					**2330,80**
	Ընդամենը					**13984,800**

Ծավալաթերթ
Չափաբաժին 2

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի թիվ 4 մանկապարտեզի ցանկապատի նորոգման,ոռոգման ցանցի և հողանցման կոնտուրի անցկացման աշխատանքներ						
N/N	Աշխատանքների և ծախսերի շիֆրը	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Արժեքը հազ.դրամ	
					Միավոր	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
1		**Ոռոգում**				
2		***1.Հողային աշխատանքներ***				
3	1--961	Բնահողի մշակում ձեռքով	մ^3	16,00	2,49	39,82
4	1--968	Բնահողի հետլիցք ձեռքով	մ^3	16,00	1,04	16,65
5		Ընդամենը				56,47
6		***2.Մոնտաժային աշխատանքներ***				
7	22--117	Պոլիէտիլենե խողովակների տեղադրում d=20*1,9մմ փորձարկումով	գծ.մ	180,00	0,67	120,72
8	22--117	Պոլիէտիլենե խողովակների խողովակների տեղադրում d=25*2,3մմ փորձարկումով	գծ.մ	82,00	0,89	73,20
9		Պոլիէտիլենե խողովակների ձևավոր մասեր d=20մմ	հատ	30,00	0,04	1,17
10		Պոլիէտիլենե խողովակների ձևավոր մասերd=25մմ	հատ	10,00	0,04	0,39
11		Անցում մետաղ պլաստ d=20մմ	հատ	25,00	1,34	33,46
12		Մետաղական խցապակիչ d=15մմ	հատ	25,00	3,37	84,16
13		Մետաղական խողովակապտուկ d=15մմ	հատ	25,00	0,33	8,36
14	16--134	Կցորդչային փական d=15մմ	հատ	4,00	5,00	19,99
15	16--135	Կցորդչային փական d=20մմ	հատ	3,00	5,55	16,66
16	23--2	Խճե հիմք դիտահորերի և տաշտակների տակ	մ^3	0,10	6,92	0,69
17	6--1	Բետոնե հիմք պլաստմասե դիտահորերի կատ B-7,5	մ^4	0,02	30,51	0,61
18	22-397	Միացում գործող ջրագծին d=20մմ	1տեղ	1,00	2,63	2,63
19	22--124	Կոյուղու ծալքավոր խողովակներից դիտահորեր D-300 h-300մմ 7հատ	գծ.մ	2,10	9,49	19,92
20		Դիտահորերի և տաշտակների մետաղական կափարիչներ D-300մմ h-1մմ	հատ	7,00	0,33	2,34
21	22--66	Մետաղական պարկուչ D-100մմ	գծ.մ	8,50	6,43	54,62
22		Պարկուճների եզրերի փակում պլաստիկ նյութով D-100մմ	հատ	1,00	0,67	0,67
23	22--202	Պարկուճների ուժեղացված հակակորոզիոն մեկուսացում D-100մմ	գծ.մ	8,50	1,53	12,97
24	46--51	Գոյություն ունեցող դիտահորերի մեջ անցքերի բացում D-150մմ	հատ	1,00	0,40	0,40
25		Գոյություն ունեցող դիտահորերի մեջ անցքերի փակում պլասիկ նյութով D-150մմ	հատ	1,00	0,00	0,00
26	11--155-1	Ջրաչափ d=15մմ	հատ	1,00	11,07	11,07
27		Ընդամենը				464,05
28		**Հողանցում**				
29		**Հողային աշխատանքներ**				
30	1--961	Խրամուղու փորում III կարգի բնահողում ձեռքով	մ^3	11,2	2,49	27,87
31	1--968	Բնահողի հետլիցք ձեռքով տոփանումով	մ^3	11,2	1,04	11,65
32		Ընդամենը				39,52
33		**Մոնտաժային աշխատանքներ**				
34	8-472-2	40*4մմշերտապողպատից հորիզոնական հողանցիչ	գծ.մ	34,0	0,74	25,13
35	8-471-1	50*50*5մմ անկյունային պողպատից ուղղաձիգ հողանցիչ 2մ	10	1,0	25,32	25,32

36		Հեղյուս մանեկ	հատ			
37		Ընդամենը	հատ	60,0	0,22	13,39
38		**Մետաղական ցանկապատ**				63,84
39		**Մոնտաժային աշխատանքներ**				
40	7--312 գ-,6	Մետաղական ցանկապատի ապամոնտաժում	գծ.մ	200	3,38	676,80
41	7--312	Խամքարբետոնե ժապավենաձև հիմքերի տակ B-12,5 դասի բետոնով	մ^3	100,00	36,19	3618,75
42	6--14	Ցանկապատի մոնտաժում հողի փորումով և հիմքերի բետոնացում խամքար բետոնով	գծ.մ	200,00	5,64	1128,01
43		Մետաղական կանգնակ100*100*4մմ	գ.մ	260,00	4,94	1283,73
44		Մետաղական պրոֆիլներ 20*20*2մմ	գ.մ	320,00	0,38	121,73
45		Ներդիր էլեմենտ 300*30020մմ	տ	0,05	537,69	24,73
46		Ցանկապատի երեսապատում գործարանային ներկածածկույթով ալիքավոր թիթեղով 0,5մմ հաստ	մ^2	312,00	5,35	1669,84
47		Գործարանային ծածկույթով ալիքավոր թիթեղի արժեքը	մ^2	312,00	3,95	1232,80
48		Ինքնապարուրվող պտուտակ	հատ	520,00	0,06	29,00
49	7--323	Դարպաս-դռնակի տեղադրում հողի փորումով և բետոնացումով// 8 քառ.մ գործարանային ներկածածկույթով ալիքավոր թիթեղով 0,5մմ հաստ	հատ	1	37,48	37,48
50		Դարպաս-դռնակի արժեքը երեսպատված 8 քառ.մ գործարանային ներկածածկույթով ալիքավոր թիթեղով 0,5մմ հաստ	հատ	1	128,29	128,29
51	33--82	Մետաղական ցանկապատի կարկասի, յուղաներկում 2 անգամ հակակորոզիոն ներկով	տ	3,608	16,92	61,04
52		Ընդամենը				
53		***Պարիսպ տուֆ քարից***				10012,21
54		***Պատեր***				
55	8-163	Պատերի իրականացում կանոնավոր ձևի տուֆ քարով	մ^3	60,0	25,51	1530,61
56	8--59	Շարքի ամրանավորում 3վռ-1 ցանցով	տ	0,25	545,02	136,25
57		Ընդամենը				1666,87
58		Ընդհանուրը				12302,9558
	Չնախատեսված ծախսեր 1,5%					
	Ընդամենը					**184,54**
	ԱԱՀ 20%					**12487,50**
	Ընդամենը					**2497,50**
						14985,000

* Կապալառուն աշխատանքները կատարում է **Արթիկի թիվ 3 և թիվ 4 մանկապարտեզներում**:
Հասցեները արտացոլված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՇՄ Արթիկի Համայնքապետարան
Հասցե՝Ազատության հրապարակ 1
ՀՎՀՀ 05553661
Բանկ՝ՀՀ ՖՆ Գործառ Վարչություն
հ/հ 900202205010
Համայնքի ղեկավար
Ա.Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Գր.
Լուսավորիչ 2-րդ նրբ., տ 9
ՀՎՀՀ 05550663
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
հ/հ 1570068301190100
Տարոն Ա. Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 25 » հուլիս 2024թ. կնքված
«ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/42» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

«ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ»

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ թիվ 3 մանկապարտեզի ցանկապատի նորոգման, ոռոգման ցանցի և հողանցման կոնտուրի անցկացման աշխատանքներ**	**Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո պայմանագրի հիման վրա կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:**	***60 օրացույցային օր:***
ԸՆԴԱՄԵՆԸ			
2	**ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ թիվ 4 մանկապարտեզի ցանկապատի նորոգման, ոռոգման ցանցի և հողանցման կոնտուրի անցկացման աշխատանքներ**	**Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո պայմանագրի հիման վրա կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից:**	***60 օրացույցային օր:***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՇՄ Արթիկի Համայնքապետարան
Հասցե՝Ազատության հրապարակ 1
ՀՎՀՀ 05553661
Բանկ՝ՀՀ ՖՆ Գործառ Վարչություն
հ/հ 900202205010
Համայնքի ղեկավար՝
Ա.Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Գր. Լուսավորիչ 2-րդ նրբ., տ 9
ՀՎՀՀ 05550663
Բանկ՝ §Ամերիաբանկ¦ ՓԲԸ
հ/հ 15700683011901 00
Տնօրեն՝Ա. Ռափյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 25 » հուլիս 2024թ. կնքված
«ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/42» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ***փաստացի կատարված աշխատանքների դիմաց*** ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	***45341200/1***	**ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ թիվ 3 մանկապարտեզի ցանկապատի նորոգման, ոռոգման ցանցի և հողանցման կոնտուրի անցկացման աշխատանքներ**							... %	... %	... %	... %	... %	... %	... %
2	***45341200/2***	**ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի կարիքների համար՝ թիվ 4 մանկապարտեզի ցանկապատի նորոգման, ոռոգման ցանցի և հողանցման կոնտուրի անցկացման աշխատանքներ**							... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՇՄ Արթիկի Համայնքապետարան
Հասցե՝Ազատության հրապարակ 1
ՀՎՀՀ 05553661
Բանկ՝ՀՀ ՖՆ Գործառ Վարչություն
h/h 900202205010
Համայնքի ղեկավար՝
Ա.Ոսկանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ԱՅ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ

ՀՀ Շիրակի մարզ, ք. Արթիկ, Գր.
Լուսավորիչ 2-րդ նրբ., տ 9
ՀՎՀՀ 05550663
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570068301190100
Տնօրեն՝Ա. Ռափիյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2024թ. կնքված
«ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/42» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2024թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 2024թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 2024թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և **դրական եզրակացությունը** հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	Մովսես Մովսիսյան
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2024թ. կնքված
«ՇՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-24/42» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 2024թ. _____ -ին կնքված N _____
___ պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 2024թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած

Ժորա Սարիբեկյան
ազգանուն, անուն

_____
ստորագրություն